

նականութիւնը, կէս դարու ուղղափառ զարգացում իսկ ունենալով իրեն ետին, չեմ գիտեր ի՞նչ պիտի ըլլայ իրենց շահեցուցած, երբ կէս դար յետոյ կրկին նստին հաշուե-
յարդարի Ռուսիայէն, Իտալիայէն կամ Գերմանիայէն
կուլ տուած իրենց «Հայրենիքին» աւերակներուն վրայ
եւ ոգեկոչեն օրերը, ուր կը սպառնային աշխարհի...: ԺՆ
կամ ԺԷ դարերուն, երբ թուրքերը կ'արտօնէին հին ոճի
հարստութիւններ, կ'ընէին ատիկա ազդեցութեանը տակ
իրենց կրօնական խղճմանքին: ԺԹ^ա դարու առաջին
կէսին՝ անոնք դարձեալ իմաստուն էին, արտօնելով կեա-
վութիւններուն ո՛չ միայն ապրիլ, այլեւ բարգաւաճիլ, պա-
լատներ ունենալ. դէպի Արեւմուտք իրենց առաջին հա-
կումը փաստօրէն պաշտպանող: Դեռ չէին հերքուած,
թիթու եւ այլամերժ ազգայնամոլութեամբ եօթանասնա-
կան թուականներու վերանորոգիչ աշխատանքները,
թերեւս մեծ վեգիքներու մտածնունդ, որոնք թուրքերը
մօտեցուցին արեւմտեան մշակոյթին, առնելով այդ Ա-
րեւմուտքին մեծ ցուցմունքները, համոզումով, ոչ թէ հիմ-
կու նման, ձեւով, տարագէ կամ գլխարկէ: Այն ատեն
ջարդ մը մտածելը հեշտագին, զայն կազմակերպելը
ծանր, զայն իրագործելը բացառիկ աշխատանքներ էին,
որոնց իւրաքանչիւրին համար իշխանութիւնները ուրոյն
խաւերու կարիք ունէին: Իսկ օր ցերեկով գեղ մը, քաղաք
մը հուրի եւ սուրի մատներու արարքը հոգեբանական
մեծ նախապատրաստութիւն կը պահանջէր: Մեծ պատե-
րագմները՝ նման առիթներ անշուշտ: Բայց որոնցմէ
դուրս, պետական ու սառնասիրտ հաշիւներով շրջան մը
իր բնիկներէն դատարկելը թուրք զանգուածին համար
դժուար հասկնալի, որով եւ տանելի քաղաքականութիւն
մը չէր: Այդ ժողովուրդը նախնական ու վայրագ, խելօք
էր, առանց արտաքին ժահրի: Հիմա՞: Դուք չէք կրնար
գտնել մէկ հատիկ թուրք, որ, մէկ ձեռքին սիլինտրը,
միւսին՝ եաթաղան, չհեշտանայ ինքն իրմէ, երկուքն ալ
գործածելուն մէջ հաւասար վայելչութիւն ու իմաստու-
թիւն գտներուն: Ու հարկ է աւելցնել՝ առանց մունետիկի,